ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/122

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թ.N 122

«ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մանուշյան/Անտառավան 4 թաղ.30

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2/երկու/ տարի ժամկետով, 2 հունիսի 2021 թ. N 49

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 20-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՇՏՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 01 փետրվարի 2024թ.

ինքնավերլուծության ներկայացում՝ 26 ապրիլի 2024թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 19-21-ը հունիսի 2024թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 04 սեպտեմբերի 2024թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 04 հոկտեմբերի 2024թ.

ՇՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Գագիկ Քթրյան՝** Հայաստանի Եվրոպական համալսարանի դասախոս, ֆիզմատ. գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար։
- **Օլյա Ավետիսյան՝** Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ։
- **Մարինա Փոթիկյան՝** ՀՀ ՆԳՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոս, փորձագիտական խմբի անդամ։
- **Արտակ Խաչատրյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ։

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով։ Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՇՏՊՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. ***ՇՏՊՔ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:***

Քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը, դասախոսական կազմը և նյութատեխնիկական բազան հիմնականում ապահովում են որակավորումների արժանահավատ շնորհումը՝ զարգացնելով շրջանավարտների գործնական հմտությունները՝ համապատասխան ՈԱՇ-ի և գործատուների պահանջներին:

Քոլեջում գործող գործատուների խորհուրդը, խրախուսում է կրթական ծրագրերի բարելավումը հատկապես պրակտիկ կարողությունների ձեռքբերման գործընթացներին աջակցելով և ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը:

Միևնույն ժամանակ փորձաքննության արդյունքում արձանագրվել են խնդիրներ, որոնց ուղղությամբ քոլեջը պետք է հատուկ ռազմավարություն հետապնդի՝ ներդնելով կրթական ծրագրերի ներքին աուդիտի մեխանիզմ բոլոր մասնագիտությունների գծով: Հատուկ ուշադրություն պետք է դարձնի կրթական ծրագրերի պլանավորմանը՝ ապահովելով վերջնարդյունքների, դասավանդման և գնահատման մեթոդների համահնչեցումը: Անհրաժեշտություն կա զարգացնել դասախոսական կազմի կարողությունները, որպեսզի կրթական ծրագրերի վերանայման ժամանակ արդյունավետ իրականացնեն վերջնարդյունքահեն դասավանդում՝ կարևորելով պրակտիկ և հետազոտական բաղադրիչները:

II. ***Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ, և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Քոլեջը կարևորում է կառավարման կայունության ապահովումն ու որակի ներքին համակարգի դերը, սակայն կառավարման արդյունավետության բարձրացման և տվյալահեն որոշումների կայացման ուղղությամբ անհրաժեշտ են համակարգված բարելավման քայլեր: Կառավարման համակարգը դեռևս չի արտացոլում արդի կառավարման մոդելների կիրառումը, և որոշումները հաճախ կայացվում են առանց բավարար վերլուծության: Նպատակահարմար է վերանայել կառավարման գործընթացները՝ հիմնվելով տվյալների վերլուծության վրա՝ ապահովելով թափանցիկություն, հաշվետվողականություն և պարբերական գնահատում: Քոլեջին խորհուրդ է տրվում ներդնել գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-եր) վրա հիմնված մշտադիտարկման համակարգ, որը կխթանի արդյունահենք մշակույթի ձևավորումը: Բացի այդ, անհրաժեշտ է ամրապնդել կառավարման և որակի ապահովման ենթակառուցվածքների համագործակցությունը, սահմանելով որակի համակարգի գործառնական անկախությունն ու դերակատարումը ռազմավարական որոշումների ընդունման գործընթացում:

III. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն:

Քոլեջը նախաձեռնում է քայլեր հետազոտական և միջազգայնացման ուղղություններով: Սակայն հետազոտական գործունեության առավել համակարգված և արդյունավետ զարգացման նպատակով անհրաժեշտ է հստակեցնել հետազոտությունների իրականացման ինստիտուցիոնալ մեխանիզմները, ինչպես նաև ներդնել ուսանողների հետազոտական աշխատանքների ինքնուրունությունը գնահատող գործիքներ: Բացի այդ, կարևոր է ձևավորել համապատասխան աջակցման քաղաքականություն և ստեղծել նպաստավոր պայմաններ դասախոսական կազմի հետազոտական ներուժի խթանման համար: Միջազգայնացման ուղղությամբ նկատվում են դրական նախադրյալներ՝ մասնավորապես միջազգային ծրագրերին մասնակցության և օտար լեզվի իմացության բարելավման նախաձեռնությունների շրջանակում: Սակայն անհրաժեշտ է մշակել և կիրառել ինստիտուցիոնալ մոտեցումներ՝ միջազգայնացման ուղղությամբ ցուցիչների սահմանման համար: Այս նպատակով նաև նպատակահարմար է ներգրավել լրացուցիչ աշխատակազմ՝ օտար լեզվի իմացությամբ և դրամաշնորհային ծրագրերի մշակման կարողությամբ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՇՏՊՔ Կառավարման խոհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույցը:
3. Թերությունների վերացման ծրագրում նախատեսել I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողություններ՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
4. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտը մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
5. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՇՏՊՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., մարտի 20